ՔՐԴԵՐԻ ԱՆՕՐԵՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ ԵՎ ԻԹԹԻՀԱՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ
(1908–1912 թթ.)

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

XX դարասկզբին Օսմանյան կայսրության բազմաթիվ շրջաններ ապրում էին քրդական միջնադարյան խավարամտության մեջ: Թուրք հեղինակ Ջելալ Նուրի բեյը՝ "Օսմանյան անկման պատմությունը" գրքում խոստովանում էր. "Միջնադարեան կարգ ու սովորութիւնները շատ տեղեր իրենց ամբողջ ուժովը կը տիրապետեն: Հեռաւոր շատ մը վայրերու մէջ ցեղապետներու և շեյխերու ազդեցութիւնը կառավարութեան ու վեհապետներու ազդեցութենէն աւելի է: Անոնք թուրք կ'առնեն, արդարադատութեան վեհապետական իրաւունք (և զուլում) գործ կը դնեն: Անոնց հպատակները, բացի հնազանդութենէ, ուրիշ բան չեն գիտեր..."[1]:

Ճանապարհորդ Մոլթկեի բնութագրմամբ՝ քրդերը "լեռներու կատարները թառող գիշատիչ թռչուններ" են, "որ ամէն պատեհ առիթ դաշտեր իջնելով երկրագործ ժողովուրդը կը կողոպտէին և իրենց արծուի բոյները կը բարձրանային..."[2]:

Ռաֆֆին նշում էր, որ դեռևս XIX դ. երկրորդ կեսին միայն Վասպուրականում հաշվվում էր 120 իրարից տարբեր քրդական ցեղ, որոնք զանազանվում էին իրենց բարքառներով, սովորություններով և անգամ կրոնով[3]:

Քրդական ամեն մի աշիրեթի (մի ցեղապետի ենթարկվող ցեղ) մեջ կային նաև տասնյակ թոռուններ (բարեկեցիկ ցեղեր), որոնք նույն ցեղին պատկանող տոհմական շառավիղներն էին: Գյուղացիությունը, ճանաչելով ցեղապետին, ճանաչում էր նաև նրա արյունակից թոռունին: Աշիրեթ – վրանաբնակ քրդերը չէին զբաղվում ոչ արհեստներով, ոչ էլ հողագործությամբ: Նրանց հիմնական զբաղմունքը ոչխարաբուծությունն էր:

Ընդհանրապես, Վասպուրականի քրդերն ամենից վտանգավորն էին, քանի որ եկվոր էին. "Նոցա հացի պաշարը հայթայթում է հայ գիւղացու աշխատանքից, կալ ու

---

[1] *Ատոմ. Օսմանեան կայսրութեան անկման պատմութիւնը, Կ. Պոլիս, 1913, էջ 58:*

[2] *Հ. Երամեան. Յուշարձան, հ. Ա, Աղեքսանդրիա, 1929, էջ 23:*

[3] *Ռաֆֆի. Տաճկահայք (Հայոց հարցը), Վիեննա, 1913, էջ 120:*

կթից, կամ բռնի յափշտակելով և կամ չնչին վճարումով…”[4]: Մինչդեռ Սասունի և Տարոնի քրդերը՝ քրդացած հայեր էին[5]:

Ի տարբերություն մյուս նահանգների՝ Վանում մեծ թիվ էին կազմում ինչպես վազկան – թափառաշրջիկ (քոչարի), ռևենտ, նոմատ, այնպես էլ նստկան (ռայաթ) քրդերը: Նահանգի հյուսիսային, հյուսիսարևմտյան և հյուսիսարևելյան լեռների լանջերին ապրում էին քրդական աշիրաթներ՝ շէվերցիք, լրմրցիք, հայտարանցիք, ադամանցիք, կալկանցիք, մուկուրցիք, մելանցիք, թակուրցիք ու այլ փոքր ցեղեր, որոնք սպառնում էին հյուսիսային գավառաբնակներին՝ կողոպտելով և սպանելով[6]:

Վանի նահանգի հարավարևելյան, հարավային և հարավարևմտյան լեռնագոտիներում՝ Տմորեաց լեռներում, Առնոսի ու Արտոսի սարահարթերում, բնակվում էին շեմսկցիք, շկակցիք, հարթոշցիք, միրանցիք, մամոդանցիք, դուդերցիք, մամքոռանցիք, շեդանցիք, ինչպես նաև նստակյաց մի շարք քրդերի բեկեր, բեկզադներ, աղաներ, գզրացիք, հալաջցիք, ազիզյանք, որոնք նույնպես պատուհաս էին հարավային շրջանների հայերի, ասորիների ու ռայաթ քրդերի համար[7]:

Շադայի Անձևացյաց և Հայոց-ձոր գավառները բազում տարիներ տանում էին գզրացի քրդերի կամայականությունները:

Վանի հարավակողմում էր գտնվում Հեքեարի մեծ աշիրեթը[8]:

Վանի նահանգի քրդական ազգագրական տեղաբաշխման մի փոքր այլ պատկեր է առաջարկում Հ. Շահբազյանը: Ըստ նրա՝ ռուս-թուրք-պարսկական սահմանագլխի ամբողջ երկարությամբ՝ Վանի գծի վրա տեղաբաշխված էին շկակները (ընդհանուր անունը), որոնք բաժանվում էին ավելի փոքր տոհմական միավորների և հայտնի էին՝ շամզկցի, կարդարցի, մուկուռցի, թակուռցի, մլանցի, լեցի, շավցի անուններով: Արճեշում հաստատված էին հայտարանցիք, Ալջավազում՝ սիպկցիք: Իսկ հարավային կողմերում՝ Նորդուզում և Շատախում՝ մինչև Տիգրանակերտ ու Հեքեարի սահմանները, գտնվում էին արտոշցիք, որոնք բաժանված էին՝ գրավցիք, շիտանցիք, մամխոռանցիք, խալիլանցիք, մահմտանցիք, մեհմետ փիրանցիք, հարքցիք, դայանցիք, ժիրկցիք, չիպարցիք, եզդինանցիք[9]:

Ինչպես մյուս շրջանների, Վանի նահանգի քաղաքներում ապրող քրդերը ևս բաժանվում էին կաբիլների՝ ցեղերի, և նույնպես ունեին իրենց պետերն ու աղաները: Պաշտոնավարելով տեղական կառավարություններում՝ նրանք անում էին այն, ինչ ուզում էին՝ մնալով անպատիժ: Քաղաքներում ապրող քրդերը, որոնք արդեն հա-

---

[4] “Հովիտ” (Թիֆլիս), 1911, № 39, էջ 621:

[5] Նույն տեղում:

[6] Նույն տեղում, էջ 620:

[7] Նույն տեղում:

[8] Լ. Մ ե ս ր ո պ. Քուրդիստան եւ քուրդերը (ակնարկ), Փարիզ, 1957, էջ 38:

[9] Յ. Շ ա հ պ ա զ ե ա ն. Քիւրդօ – Հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911, էջ 120–121:

մարյա թուրքացել էին, միջնորդի դեր էին կատարում կառավարության և աշիրեթապետների միջև:

Աշիրեթ–կաբիլ–կառավարություն. ահա այն երեք ուժը, որը հիերարխիա կազմած՝ քանդում էր Հայաստանը[10]:

Երիտթուրքերի հեղաշրջումը, սահմանադրության վերականգնումը և կառավարության ձեռնարկած միջոցառումները մեծ հույսեր արթնացրեցին հայերի շրջանում: Կառավարությունը ռազմական մի շարք քայլեր ձեռնարկեց սուլթանի կողմից հովանավորվող քուրդ ավատատերերի դիրքերը թուլացնելու նպատակով[11]: 1908 թ. սեպտեմբերին հրաման արձակվեց համիդիե գնդերի զինաթափման ու ցրման մասին, ինչպես նաև ընդունվեց օրենք ոչ մահմեդականների զինակոչի մասին: Չեղյալ հայտարարվեց նաև ոչ մահմեդականների քաֆիրության տուրքը և քուրդ ավատատերերի օգտին կատարվող անվճար աշխատանքները: Ինչպես Մ. Էպլիղաթյանն է նկատում, "...սահմանադրութեան հոչակումէն ետք... քիւրտին համար այլեւս հայերու վրայ անպատիժ բռնանալը եթէ ոչ անկարելի՝ գէթ դժուար դարձաւ"[12]:

Քրդերը՝ որպես համիդյան շրջանի զորավիգ տարր, իրենցից ներկայացնում էին հակասահմանադրական մի ուժ՝ թշնամի նոր վարչաձևին և սահմանադրական Թուրքիային. "Թուրք-քրտական միութիւնը, համիտեան սանձարձակութիւններու հետ մեկտեղ, կը վերանար, ու քիւրտերը կ'որդեգրէին հակաթուրք քաղաքականութիւն մը"[13]:

Արդյունքն այն էր, որ արդեն Մեհմեդ V օրոք երիտթուրքերը հրապարակեցին մի օրենք, ըստ որի՝ արևելյան նահանգների, այդ թվում՝ Վանի նահանգի քրդական բնակչության մի մասը վերաբնակեցվեց երկրի կենտրոնական շրջաններում՝ այն հաշվարկով, որ քրդերը կազմեն այդ շրջանների թուրք բնակչության միայն 5 %-ը[14]:

Երիտթուրքական ժամանակներից ուժեղացվեց քրդերի ազգային ինքնագիտակցության և ինքնուրույն էթնիկական միավորի անտեսումը[15]:

Քաղաքական հակումների այս խիստ հստակ տարբերության առումով, հայերն ու քրդերը սահմանադրության առաջին իսկ օրերից հայտնվեցին հակադիր ճակատների վրա: Հայերը ջերմ սահմանադրականներ էին և միևնույն ժամանակ համաձայ-

---

[10] *Հ. Սիմոնյան. 1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը, Երևան, 2014, էջ 460:*

[11] A. Safrastian. Kurds and Kurdistan, London, 1948, p. 69.

[12] *Մ. Մ. Էպլիղաթեան. Կեանք մը ազգիս կեանքին մէջ, ականատեսի եւ մասնակցողի վկայութիւններ 1903–1923, Անթիլիաս, 1987, էջ 77:*

[13] *Կ. Սասունի. Քիւրտ ազգային շարժումները և հայ-քրտական յարաբերութիւնները (ԺԵ դարէն մինչեւ մեր օրերը), Պեյրութ, 1969, էջ 194:*

[14] The Massacres of Kurds, Publication of the Kurd's National League Hoyboun, Cairo, 1928, p. 8.

[15] С. С. Аванесов. Положение национальных меньшинств в Турции. Ереван, 1963, с. 48–49.

նության ու համագործակցության մեջ էին երիտասարդ թուրքերի հետ: Իսկ քրդերը մնացին նույն դիրքերի վրա և շարունակեցին հետևել այն նույն ուղղությանը, ինչ որ կար համիդյան ժամանակաշրջանում: 1909 թ. սկսած՝ ինչպես Վանի ֆրանսիական փոխհյուպատոս Ս. Զարսեսկին է արձանագրում, հայ և քուրդ ժողովուրդների հարաբերությունները բնութագրվում են իրական պատերազմով[16]:

Հայ-քրդական հակամարտության շարունակությունն աղետալի երևույթ էր, որի ծանրությունը ո՛չ հայերը և ո՛չ էլ քրդերը ժամանակին չկարողացան կռահել: Հայերն անճար կառչած էին կառավարությանը և, օգտվելով սահմանադրական ազատություններից, հույս ունեին խաղաղ ճանապարհով, հեղափոխական կարգերի շնորհիվ հաղթահարել դժվարությունները ու, վանելով քրդական վտանգը, ազատվել ճորտական վիճակից: Իսկ քրդերը, ժամանակավոր համարելով սահմանադրական ազատությունները և հենվելով իրենց զինական ուժերին, վստահ էին, որ նորից կվերականգնեն իրենց բացարձակ տիրապետությունը հայության վրա:

Այն, որ քրդերը հայերի նկատմամբ ունեին ընդգծված ատելություն՝ որպես ուրիշ կրոն դավանող ազգի, մեղավոր էին թուրքերը: Գեներալ Թ. Նազարբեկյանի հավաստմամբ, թուրքերի կողմից էր արմատավորվել հայերի նկատմամբ քրդերի ունեցած հակադրությունը[17]: Իրավացի է Ն. Հովհաննիսյանը, երբ նշում է, որ քուրդ-հայկական հարաբերությունների խնդիրը մի վերին աստիճանի բարդ հանգույց է, որը պահանջում է համակողմանի քննարկում Հայոց ցեղասպանության քրդական գործոնի պարզաբանման տեսանկյունից[18]: Բանն այն է, որ այդ հակամարտության սաղմերն աճեցին և հանգեցրին 1915 թ. Հայոց եղեռնին, որի վերջնական նպատակը, ինչպես Բիթլիսի հայ-քուրդ ու թուրք համերաշխության 1915 թ. ժողովի արձանագրության մեջ էր նշվում, հայերի և քրդերի բնաջնջումն էր[19]:

Հայության և քրդության հակամարտության գլխավոր հիմքերը, մասնավորապես, Վանում տնտեսական-դասակարգային էին:

Անձի և գույքի ապահովությունը էությամբ ուղղված էր քուրդ ժողովրդի դեմ, ավելի ճիշտ՝ քուրդ տիրող և ղեկավար դասակարգի դեմ, որը նախորդ 30 տարվա ընթացքում իր դիրքերն ամրապնդել էր շնորհիվ տիրող անապահովության: Քուրդ պատմաբան Ք. Ահմադը գրում է, որ քրդական ցեղերի ավազակու ազահությունն ու ընչաքաղցությունն էր պատճառը, որ նրանք սպանում էին հայերին և իրենց ձեռքը

---

[16] S. Z a r z e c k i. La questione Kurdo-Arménienne.– “Revue de Paris”, XXI, april 15, 1914, p. 888; նաև՝ R o d e r i c H. D a v i s o n. The Armenian crisis, 1912, 1914, New York, 1948, p. 3.

[17] *Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 45, ց. 1, գ. 7, թ. 22–23:*

[18] *Ն. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. Քրդերի մասնակցությունը հայերի ցեղասպանությանը, քրդական գործոնը Արևմտյան Հայաստանի հարցի լուծման հայկական հայեցակարգում, Երևան, 2016, էջ 13:*

[19] *Կ. Ս ա ս ո ւ ն ի. նշվ. աշխ., էջ 195:*

գցում վերջիններիս հողատարածքները, արոտավայրերը, անասունները, գույքն ու ունեցվածքը[20]:

Հայաստանի վարչական ինքնավարությունն ինքնին դեմ էր քրդական ավատապետական կազմակերպությանը, որովհետև նման բարենորոգումը, գոնե վարչական հիմքի վրա, օրենքի և իրավունքի տիրապետությունը պետք է հաստատեր մի տեղ, ուր անիրավությունն ու անիշխանությունը եղել էին տիրական:

Վանում հայերի և քրդերի հաշտությունը հենց սկզբից դարձավ խնդրո առարկա, քանի որ քրդերի տնտեսական ու քաղաքական վիճակն անկարելի էր դարձնում որևէ համագործակցություն: Մինչև 1908 թ. սահմանադրությունն աշիրեթապետերը հարստանում էին քաֆիրության (խաֆիրության) տուրքով և լիովին օգտվում էին հայ գյուղացու ձրի աշխատանքից՝ օլամից (դարապարհակից): Ավատապետերի մտայնության մեջ դարերով արմատացած էր ավատական այդ ըմբռնումը, և դրա խախտումը նրանց թվում էր անկարելի, քանի որ այն կյանքի ու մահվան խնդիր էր:

Քուրդ ցեղապետերն իրենց կիսանկախ ավատապետական իշխանությունը ցանկանում էին պահպանել գոնե հայերի նկատմամբ՝ որպես գրավական իրենց քաղաքական տիրապետության: Քրդերի կողմից հայերին զիջումներ անելը կնշանակեր հրաժարվել տիրող դասակարգի քաղաքական և տնտեսական իրավունքներից, դառնալ աշխատավոր գյուղացի ու ապրել սեփական աշխատանքով. "Այս արդէն ընկերային-տնտեսական մեծ յեղաշրջում մը կ'ըլլար, ինչ որ կարող էր գլուխ գալ կամ պետութեան բռնի հարկադրումով եւ կամ հայերու ուժեղ ըմբոստութեամբ"[21]:

1908 թ. սեպտեմբերի սկզբներից երիտթուրքական կառավարությունը Վան է կանչում քուրդ ցեղապետերին, որոնք հավատարմության երդում էին տվել և նրանց պաշտոնապես տեղեկացվում է սահմանադրության հրապարակման մասին: Այս առիթով քրդական ցեղապետերի հայտարարություններից առանձնանում է Ադիլջևազի գավառի հայտնի կալվածատեր, համիդիե զորքերի հրամանատար Հայդերանլը Հյուսեին փաշայի՝ Վանի զինվորական ընդհանուր հրամանատարին ուղղված զեկույցը, որում նա նշում էր. "...անցեալում հայերի վրա գործ դրված բարբարոսութիւնների վերաբերմամբ ինքը բնաւ մեղք չունի, որովհետև այն, ինչն ինքն է գործել, դա միայն Եըլդըզից ստացված որոշ ցուցմունքների հետևանքն է" և որ ինքը "իրան տրված հրահանգների միայն 1/10–ը հազիվ է գործ դրել"[22]: Հյուսեին փաշային հրամայված էր Ադիլջևազի գավառի հայությանը բնաջնջել, բայց նա պարծենում էր, որ բավականացել է միայն հայերին կողոպտելով:

Չնայած հայերի պահանջին՝ պատժել Հյուսեին փաշային ու նրան չվերադարձնել Ադիլջևազը, կառավարությունն անտեսեց դա և Կարինի ու Բայազետի սահմանն-

---

[20] الدكتور كمال مظهر أحمد، كردستان في سنوات الحرب العالمية الأولى، الطبعة الثالثة، بيروت- لبنان، 2013، ص.268–271

[21] Կ. Սասունի. նշվ. աշխ., էջ 201:

[22] "Մշակ" (Թիֆլիս), 2. X. 1908:

րից վռնդված Հյուսեին փաշան հաջող ապաստան գտավ Վանում և Արճեշում, որտեղ տեղ էին գտել Համիդյան վարչակարգի կողմնակիցները[23]: Դեռ ավելին. մեկ ամսից ավելի էր, ինչ կենտրոնական կառավարությունից հրաման էր եղել հավաքել Համիդիե զորքի մոտ գտնվող կառավարական զենքերը, սակայն դա ոչ միայն չէր գործադրվել, այլև Հյուսեին փաշան համարձակվել էր 600 հոգուց բաղկացած զորաբանակ կազմել Արճեշում[24]:

Անպատժելիության հետևանքը լինում է այն, որ նահանգում տեղի են ունենում նոր հանցագործություններ: Այսպես, 1908 թ. օգոստոսին թագուռցի Հյուսեին բեկի ծառաներն Ախոռիկ գյուղում սպանում են մոր և որդուն այն բանի համար՝ նրանք համարձակվել էին դիտողություն անեին Հյուսեին բեկին, որի տղայի հարսանիքի ժամանակ հարսնևորների ձիերը փչացրել էին իրենց ցանքսերը: Քանի-քանի անգամ դիմեցին դատարան, սակայն դատարանը չբարեհաճեց ձերբակալել նրանց. "... մի՞թէ հայի սպանութեան պատճառով արժէ ձերբակալել, բանտարկել թիւրքին կամ քիւրդին"[25]:

Միայն 1909 թ. մարտ-մայիս ամիսներին Արճեշի գավառակում սպանվել են 6, վիրավորվել՝ 1, Գավաշի և Կարճկանի գավառակներում սպանվել են 2, վիրավորվել՝ 3, Նորդուզի գավառակում սպանվել՝ 7 հայ[26]: Այս եղեռնագործությունների հեղինակներից ոչ ոք չի ձերբակալվում: 1909 թ. հուլիսին, երբ Արճեշում մի հայ երիտասարդի սպանության համար 5 թուրք է կալանավորվում, տեղացի ազդեցիկ թուրքերից մեկը՝ Հաջի Հասանը, բացականչում է. "... ի՞նչ է նշանակում մի հայի սպանութեան պատճառով հինգ թիւրքեր բանտարկել"[27]:

1908 թ. սեպտեմբերի 18-ին Վանի վիլայեթի Համիդիեի գավառում թուրքերն ու քրդերը միանալով՝ սպառնում են Վանից այնտեղ գնացած առևտրական հայերին սպանել և կողոպտել: Պտտվող լուրերի համաձայն՝ այդ սադրանքը հրահրել էր Վանի շրջանի կայմակամ Ջեդեթ բեյը՝ նախկին վալի Թահիր փաշայի որդին, ով 1908 թ. դաշնակցական Դավոյի դավաճանության պատճառով Վանի զինապահեստների հայտնաբերման ժամանակ Խաչան գյուղում անմարդկային բարբարոսությունների դիմեց: Հայերը հեռագրով դիմում են Վանի վալիին և օգնություն խնդրում, սակայն պարզվում է, որ այն տեղ չի հասել[28]:

Քուրդ ցեղապետերից էր Արճակի հայաբնակ Մանտան գյուղում հաստատված Սայիդ բեյը՝ Ճելո Այիբ խան բեկի որդին, որը շուրջ 15 տարի, թողնելով իր Դիբայլու

---

[23] *Նույն տեղում:*

[24] *"Մշակ", 2. XII. 1908:*

[25] *"Մշակ", 2. VIII. 1909:*

[26] *Նույն տեղում:*

[27] *Նույն տեղում:*

[28] *"Մշակ", 2. X. 1908:*

գյուղը, հանգրվանել էր Մանտանում՝ բացարձակ տիրապետողի իրավունքով. "Այն չարիքը, որ այս բէկը հասցրել է մանտանցիներին, գերեզմանումն անգամ չի մոռացուիր"[29]: Նա սեփականացրել էր գյուղի ողջ չիմանը (արոտատեղին ու խոտնոցը), գյուղացիներին ձրի աշխատացնելով՝ հավաքում էր խոտը և վաճառում, գրավել էր գյուղացիների ձիթհանը ու մի ջրաղաց: Բողոքներն ապարդյուն էին անցել, քանի որ ստեղծված հանձնաժողովը, թեև իրավունք վերապահեց հայերին, որ տեր լինեն իրենց հողերին, բայց Սայիդը չենթարկվեց[30]: Եվ այդ ամենը կատարվում էր սահմանադրական կառավարության աչքի առջև: Երբ կառավարական զորքերը փորձում էին բռնել նրան, նա կամ փախչում էր ուրիշ գյուղ, կամ, մնալով տեղում, կաշառում էր զորքին, որոնք զայրացած քաղաք էին վերադառնում՝ հայհոյելով անզգամ բեկին, որ իրենց ձեռքը "չընկաւ պինդ բռնելու"[31]:

1908 թ. երիտթուրքական հեղաշրջման ժամանակ Նորդուզը դարձել էր քուրդ բեկերի սպանությունների և ալան-թալանի թատերաբեմ: Հուսահատական էր տեղի հայերի վիճակը. "Խեղճ հայերը ստիպված են ապրել գրաւցոց կողքին, կարծես մէկը ճնշվելու, միւսը ճնշելու պաշտօնով: Մինչ լրջօրէն հրամայում, իսկ միւսը անասնօրէն հպատակում է, մին ստրուկ, "ֆլա", միւս լիազօր տէր և աղա"[32],– գրում է "Մշակը": Նորդուզում ալան-թալանը, սպանությունները և հափշտակությունները շարունակվեցին սահմանադրությունից հետո էլ: Քուրդ ավազակապետ Միր-Մհեն իջնելով լեռներից՝ հաճախ էր "այցելում" գյուղերը:

Կառավարությունը բազմիցս զորք էր ուղարկել Նորդուզ քուրդ ավազակներին ձերբակալելու համար, բայց զորքը միշտ ամոթապարտ հետ էր նահանջում:

Կառավարությունը ձերբակալում է անհնազանդ Մլանցի Մահմադ, Թակուրցի Հուսեյին և Շամզկցի Սադամ բեկերին՝ սահմանն անցնելու ու Պարսկաստանում թալան կազմակերպելու համար: Ձերբակալվում են նաև հայդարանցի Հաջի-Թամիր և Քյոռ-Հյուսեին փաշաները՝ Արճեշ-Ալջավազում հայերի վրա կատարած բռնությունների ու կոտորածների համար[33]: Փորձեր են ձեռնարկվում Շատախն ավերող ավազակապետ Միր-Մհեին ձերբակալելու համար, ով ամբաստանվում էր ոչ միայն հայերին սպանելու ու հայկական գյուղերը թալանելու մեղադրանքով, այլև կառավարական զորքերին վնաս պատճառելու համար[34]: Այդ գործում մեծ աշխատանք է տանում Շատախի հայ կայմակամ Նիկողայոս էֆ. Աղասյանը[35]:

---

[29] *"Գործ" (Թիֆլիս), 30. X. 1908:*
[30] *"Մշակ", 5. VII. 1908:*
[31] *"Գործ", 30. X. 1908:*
[32] *"Մշակ", 6. XI. 1909:*
[33] *"Գործ", 24. III. 1909:*
[34] *"Կոհակ" (Կ. Պոլիս), 1909, - 16, էջ 188, նաև՝ "Հայրենիք" (Կ. Պոլիս), 11/24. VIII. 1909:*
[35] *"Կոհակ", 1909, № 23, էջ 256:*

Կուսակալի փոխանորդ եղած ժամանակ Վանի զինվորական հրամանատար Յավեր փաշան ձերբակալեց Արճակի մյուդիրության մոտ գտնվող քուրդ Սեյիդ բեյին, բայց հետո "համբուրելով ճակատը ազատ արձակեց զայն"[36]: Կուսակալ Բեքիր Սամի բեյը, նկատի ունենալով ոճրագործի դեմ եղած անթիվ բողոքները, կրկին ձերբակալեց նրան: Սեյիդ բեյի առաջին բանտարկության ժամանակ Մանտան գյուղի գյուղացիների արդարացի բողոքի հիման վրա խորհրդարանն որոշում է կայացնում, որ Սեյիդի մարդիկ դուրս գան հիշյալ գյուղից: Այս որոշումը, թեև, իսկույն հեռագրվում է Արճակի մյուդիրին, որ գործադրի, սակայն մնում է թղթի վրա, քանի որ ժամանակին Յավեր փաշան մյուդիրից պահանջել էր չգործադրել որոշումը[37]:

1909 թ. սեպտեմբերի 25-ին Ադիլջևազի Սյութեն գյուղում դաժանաբար մորթոտվում և ծովն են նետվում ծագումով բնիկ արծկեցի ու բուլանղցի շրջիկ 6 հայ մանրավաճառ, որոնցից երկուսը 12–15 տարեկան էին: Այս բոթը նոր սարսափներ առաջացրեց երկրում, նամանավանդ, եթե հաշվի առնենք, որ ոճրագործությունը կատարվել էր կուսակալ Բեքիր Սամի բեյի Ադիլջևազում պաշտոնական պտույտի ժամանակ, կարծես թե, մատնանշելու համար վալիի ապիկարությունը: Վալին միջոցներ է ձեռնարկում ոճրագործներին բացահայտելու համար, բայց ապարդյուն, քանի որ հարձակման ենթարկված և չսպանված երկու թուրք հրաժարվում են ցուցմունք տալ: Հայերը դիմում են Ադիլջևազի կայմակամին՝ մոտակայքի քուրդ գյուղացիներին պատասխանատվության ենթարկելու համար: Սակայն նա պատասխանում է. "... ի՞նչ էք ուզում, ուզում էք բնաջինջ անել բոլոր քիւրդերի՞ն, դրանից վնասվողները կրկին ինքներդ էք լինելու, պէտք չէ զայրացնել քիւրդերին, եթե ոչ, հալածվելիս, նրանք կը զայրանան և կրկին ձեզ հայերիդ կը կոտորեն"[38]: Դեռ ավելին, նա նշում է, որ հայերն իրենցից բռնագրավված հողերը գնեն Հուսեին փաշայից[39]: Հիշյալ ոճրագործությունն անիշխանական վիճակ առաջ բերեց Վանի նահանգում: Դրան հաջորդեցին ուրիշ ոճրագործություններ. մի հայ կնոջ դի հայտնաբերվեց Արծկեի ծովեզերքում, մի ուրիշ հայ սպանվեց Աբաղայի դաշտում, իսկ Նորդուզի գավառում թալանվեցին Կանգուառ գյուղի և ս. Հոգեաց վանքի 150 ոչխար[40]:

Ալջավազի մեծ ավազակապետ Քոռ Հուսեին փաշան, ով բանտարկված էր զորանոցում և հարյուրավոր բողոքներ կային իբրև մարդասպանի ու թալանչու, 1909 թ. սեպտեմբերին ազատ արձակվեց[41]: Բանն այն էր, որ տեղական ոստիկանական

---

[36] Նույն տեղում, № 12, էջ 139:

[37] Նույն տեղում:

[38] "Մշակ", 28. X. 1909:

[39] "Կոհակ", 1909, № 21–22, էջ 248:

[40] Կանգուառում էր, որ 1908 թ. ապրիլին հայտնի ավազակապետ Միր-Մհեի կողմից սպանվեց 7 հայ և թալանվեց գյուղը (տե՛ս "Մշակ", 28. X. 1909):

[41] "Հորիզոն" (Թիֆլիս), 9. VIII. 1909:

պաշտոնյաները "զայն իբրեւ բանտարկեալ չէին նկատեր, այլ իբրեւ պատուաւոր հիւր, որուն առջեւ յարգանքով ոտքի կը կենային"[42]:

Չկարողանալով տանել Հուսեին բեկի բռնությունները՝ Սարայի շրջանի հայ, քուրդ, եզդի և ասորի գյուղացիները 1909 թ. աշնանը օգնության համար դիմեցին Վասպուրականի դաշնակցության կենտրոնական կոմիտեի անդամ Ա. Վռամյանին, ով վստահեցրեց, որ գյուղացիները մի փոքր համբերեն, մինչև դատարանները վերակազմվեն ու ստեղծվեն նոր դատարաններ՝ նորընտիր դատավորներով[43]:

Այս դեպքերից հետո Վան է ժամանում օսմանյան խորհրդարանի անդամ քուրդ շեյխ Աբդուլ Քադիրը, ով երազում էր տեսնել սահմանադրական բարեկարգված Թուրքիա: Նա հեռագրով իր մոտ է կանչում շրջակայքի քուրդ ցեղապետներին և, ելնելով Օսմանյան պետության շահերից, ներկայացնում է քրդերի կողմից առաջ բերվող խժդժությունների բացասական հետևանքները՝ նշելով, որ "երկրի բոլոր ժողովուրդները եթէ համերաշխ չը լինեն, եթէ երկրում խաղաղութեան փոխարէն տիրեն միշտ խռովութիւններ, շարունակվէն խժդժութիւններ, օտարը պատրուակ պիտի ունենայ միջամտելու, ինչպէս արվել է դրացի Իրանում, և մեր գեղեցիկ հայրենիքը փայ-բաժին է լինել օտարին, զգուշացէք երկրի վրա հրաւիրելուց այդ դժբաղդ ոգէն"[44]: Հանդես գալով հայ-քրդական համերաշխության կոչով՝ նա 1909 թ. հոկտեմբերի 19-ին Վանի Իթթիհատի ակումբում հրավիրեց հայ, թուրք և քուրդ ազգերի 300 ներկայացուցչի խորհրդակցություն, որտեղ ներկաները, չարիքի արմատը համարելով համիդյան բռնապետությունը, երդվեցին հավատարիմ մնալ "հայրենիքին, սահմանադրությանը և ազգերի համերաշխությանը": Հատկանշական էր Մոկսի մարդասեր Մրթուլլան (Մուրթուլա) բեյի խոսքը, որտեղ նա նշում էր՝ "մենք քիւրդերս այդ բռնապետական կառավարութեան որսի շներն էինք, նա մեզ ուղարկում էր որսի, բերում էինք որսը, իսկ կառավարութիւնը պոկում էր համեղ կտորները, պարարտ միսերը և մեզ թողնում էր ոսկորները, որոնց մենք կրծում էինք..."[45]:

Բանն այն էր, որ քրդերը հաճախ մեղավորություն փնտրում էին արտասահմանից եկած հայ "ինքնակոչ առաքյալների"՝ հեղափոխականների մեջ: Այսպես, "Իթթիհատ" պարբերականը գրում էր, որ "...քանի մը երիտասարդներու, մասնավորապես Արամի և Իշխանի ներկայութիւնն ու գործունեութիւնն է, որ պատճառ կըլլա երկրի վրդովման ու ժողովուրդներու իրարանցման"[46]:

Ոստիկանություն հարցաքննության են կանչվում դոկտ. Տ. Դավթյանը և Ա. Վռամյանը: Ինչպես պարբերականն է նկատում "Բժիշկը" (Տ. Դավթյանը)՝ որպես ռուսահ-

---

[42] *"Զայն Հայրենեաց" (Կ. Պոլիս), 23–25. X. 1909:*

[43] *"Հայրենիք" (Բոստոն), 1923, փետրվար, № 4, էջ 31:*

[44] *"Մշակ", 28. X. 1909:*

[45] *"Մշակ", 12. XI. 1909:*

[46] *"Առաջամարտ" (Կ. Պոլիս), 27/10. VII. 1909:*

պատակ, հարցաքննության գնաց ռուսական հյուպատոսի հետ, որն էլ շատ կարճ տևեց, և նա առանց որևէ պատասխանատվության ազատ արձակվեց: Իսկ Ա. Վռամյանը՝ որպես ամերիկահպատակ, անգլիական հյուպատոսի խորհրդով հարցաքննության չենթարկվեց. քանի որ ամերիկահպատակները միմիայն ամերիկյան դատարանի առջև կարող էին հարցաքննվել[47]:

Քրդերն անպատիժ էին մնում նաև մյուս գավառներում: 1910 թ. Ադիլջևազի գավառակում մորթոտված 6 հայի սպանության ոճրով ամբաստանված ու բանտում գտնված 16 քրդից 11-ը անպարտ արձակվեցին և 5-ը միայն 3–8 տարով բանտարկվեցին: Մինչդեռ նախորդ վալի Բեքիր Սամի բեյը խոստումներ էր շռայլում, որ ոճրագործները կախաղան են բարձրացվելու. միայն մեկը, այն էլ իր բացակայության ժամանակ, մահվան դատապարտվեց[48]:

Լինում էին դեպքեր, երբ հայերն էին սպանում քրդերին՝ իրենց վրիժառության ցասումը բավարարելու համար: 1909 թ. փետրվարի 26-ին Վանում Կարճկան գավառի Սուրբ գյուղի բնակիչ Ղազարի ձեռքով սպանվում է նույն գավառի Բիկանց գյուղի քուրդ Ջահվար աղան: Պատճառն այն էր, որ չորս տարի առաջ քուրդ աղան առևանգել էր նրա քրոջը և սպանել հարազատներից մեկին[49]:

1910 թ. գարնանից նորից Նորդուզի, Շատախի և Վերին Հայոց Ձորի շրջաններում կրկին հայտնվում է ավազակապետ Միր-Մեհեմ[50], որին, ինչպես նշվեց, կառավարությունը քանիցս հանձնարարել էր բռնել[51]: Սակայն հետապնդողներն այնքան ապիկար էին, որ ավազակն ամենայն ճարպկությամբ միշտ փախչում էր մի գյուղից մյուսը: Այս առիթով "Կոհակ" պարբերականն ընդհանրացնում է. "Եթէ միականի քիւրտ մը մի տարիէ ի վեր կառավարութիւնը անկարող կ՚ըլլայ բռնել կամ սպանել, ուրեմն եթէ տասն հատ այդպիսիներ լինին, բանակներ ալ չպիտի բաւեն"[52]:

Գլուխ է բարձրացնում նաև օլամների (ձրի աշխատանքի) հարցը: Քրդերը Բեքիր-Սամի բեյի օրոք չեն բավարարվում միայն 1910 թ. օլամներով, այլ պահանջում են նաև նախորդ երկու տարվա օլամներն էլ այն դեպքում, երբ ժողովուրդը, առաջնորդվելով սահմանադրության "հուրիեթ"՝ "ազատություն" կարգախոսով, իրեն իրավունք էր վերապահել դադարեցնել օլամների վճարումը: Սակայն վալիի վերաբերմունքն այդ հարցում հիասթափեցրեց հայերին՝ ցույց տալով, որ սահմանադրությունից հետո էլ ոչ մի բան չէր փոխվել:

---

[47] *"Առաջամարտ", 19/1. IX. 1909:*
[48] *"Մշակ", 7. IV. 1911:*
[49] *"Գործ", 26. III. 1909:*
[50] *"Հորիզոն", 31. VII. 1910:*
[51] *"Հորիզոն", 9. VIII. 1909:*
[52] *"Կոհակ", 1909, № 21–22, էջ 249:*

Կարճկանում Բեքիր-Սամիի կողմից անտառապետ է նշանակվում Մուսա բեյ անունով մի բռնավոր, որի դեմ հարյուրավոր գանգատներ կային: Երբ Բեքիր-Սամիին հանդիմանում են՝ ասելով, թե նա ինչպե՞ս է այդ կարևոր պաշտոնը վստահել նման մարդուն, նա պատասխանում է. "Ի՞նչ կարեւորութիւն ունեն գանգատ-բողոքները, հայերին եթէ հարցնելու լինենք, բոլոր քիւրդերին պետք է քշել, հալածել երկրից"[53]:

Ս. Մ. Հակոբյանը ենթադրում է, որ հայ գյուղացիության կոտորածին ու թալանին, որպես կանոն, մասնակցում էին ոչ թե թուրք և քուրդ գյուղացիական զանգվածները, այլ առավելապես թուրքական իշխանությունների կողմից հրահրված բեյերի հրոսակախմբերը[54]:

Քրդական շահատակությունների գոհ դարձավ շատախեցի Հովհան էֆ. Տ. Մարգարյանը, ով գործունյա և ազգասեր մի հայ էր, զգալի ազդեցություն ուներ կառավարական շրջաններում ու համարձակ բողոքում էր զեղծումների և իր ազգակիցների զրկանքների համար: Նա ընդդիմանում է նախկին ավազակապետ Շաքիրի դեմ՝ որպես ավազակ Միր-Մեհի պաշտպան և նրան մի քանի ամիս նստեցնում է բանտ: Սպանությունը 50 ռսկու դիմաց իրականացնում է Միր-Մեհն. այն ունեցավ իր դիվանագիտական արձագանքը: Էրզրումի ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Շտրիտտերը Կ. Պոլսի ռուսական դեսպան Չարիկովին 1910 թ. նոյեմբերի 24-ին տեղեկացնում էր. "Ինչպես որ առաջ պատիվ եմ ունեցել տեղեկացնելու Ձերդ գերազանցությանը, այժմ էլ թուրքական իշխանությունների վերաբերմունքը հայերի նկատմամբ մնում է անբարեհաճ. բոլոր դեպքերում, երբ հայերը հանդես են գալիս որպես տուժածներ, նրանց բողոքներն ու դիմումները մնում են ձայն բարբառո հանապատի"[55]:

Վանի իշխանությունները Շաքիրին է հանձնում Միր-Մեհին ձերբակալելու գործը: Երբ շատախցիները դիմում են վալիի փոխանորդին և հայտնում, որ Միր-Մեհի հովանավորն ու պաշտպանը հենց Շաքիրն է, և հենց այդ պատճառով է Բեքիր բեյը նրան հեռացրել Նորդուզ գավառից ու բնակեցրել Հայոց Ձորում, փոխանորդը պատասխանում է. "Այդ կառավարութեան պատկանած մի գործ է և ոչ ձերը", իսկ հայոց առաջնորդի ներկայացուցչին էլ ասում է, որ "ինչու՞ դուք չէք յուզվում ու ցաւ զգում, երբ քիւրդեր են սպանվում, իսկ յուզվում ու ցաւում էք, առաջնորդարանում ժողովներ էք սարքում, երբ մի Հովհան էֆէնդի է սպանվում. այս է ձեր հաւասարութեան համար ցոյց տուած ապացոյցը"[56]:

---

[53] *"Մշակ", 13. X. 1910:*

[54] *Ս. Մ. Հակոբյան. Ազգամիջյան հարաբերությունները Արևմտյան Հայաստանում Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակաշրջանում.– ՀՍՍՌ ԳԱ "Տեղեկագիր" հաս. գիտ., 1962, № 6, էջ 31:*

[55] *Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու Մ. Գ. Ներսիսյանի խմբ., Երևան, 1991, էջ 268:*

[56] *"Մշակ", 3. XII. 1910:*

1911 թ. մայիսին Միր-Մեհի կողմից Նորդուզում սպանվեց ծնունդով շատախցի Արշակ Դանիելյանը, ով կառավարական պաշտոնյա էր և 4 ժանդարմի հետ քննություն էր կատարում գավառում: Հետաքրքրական է, որ ավազակը չի սպանում Ա. Դանիելյանին ընկերակցող թուրք ժանդարմներին, քանի որ նրանք հայ չէին և բավարարվում է միայն նրանց զենքերի առգրավմամբ: Նույն օրը Միր-Մեհն վիրավորում է 2 ասորու, իսկ մի քանիսին էլ գերի է վերցնում և միայն փրկագին վճարելուց հետո ազատ արձակում:

Այս դեպքերը կրկին վրդովմունք և երկյուղ են առաջացնում Շատախում ու Նորդուզում, որի արդյունքում երթևեկությունը և հարաբերությունները դադարում են քաղաքի հետ:

Շատախցիները նամակով դիմում են կենտրոնական կառավարությանը և, արտահայտելով իրենց վրդովմունքը, առաջարկում են Միր-Մեհին ու Շաքիրին արտաքսել Շատախից[57]: Կառավարության բուռն ճիգերից հետո ձերբակալվում է միայն Սայիդի եղբորորդին, ով նրա ավազակախմբի անդամներից էր:

Միր-Մեհի և Շաքիրի անօրինականությունների և բռնությունների առիթով Վան մեկնած շատախցի 25 պատվիրակ Պատրիարքարանին ուղղված 1911 թ. հունիսի 10-ի իրենց հեռագրում խնդրում էին միջոցներ ձեռնարկել Շաքիրին և Միր-Մեհին ընտանիքներով իրենց գավառից արտաքսելու համար[58]:

Պատրիարքն իր հերթին հեռագրի բնագիրը ներկայացնում է Բ դռանը: Շուտով բանտարկվում է Միր-Մեհի և ուրիշ ավազակների խորհրդատուն ու պաշտպանը՝ Շաքիրը[59]:

Սակայն նահանգի մյուս շրջաններում շարունակում էին գործել Գատրի, Ջաֆեռի, հաջի Մուսա բեյի (Կարճկան), Այիպխան բեյի (Մանտան), Սայիդ բեյի (Մանտան) ավազակային խմբերը, Մանտանցի Սայիդը սպառնալիքներով համարձակ շրջագայում էր և հայերից ու քրդերից հավաքում դրամ, ուտեստ, հագուստ և զենք[60]: Նա չէր խնայում անգամ չունևորներին, որոնք ոչ միայն չէին վճարում պետական հարկերը, այլև իրենց առօրյա ապրուստը չոր հացով էին հոգում: "Ազատամարտ"-ը մանտանցի Սայիդի մասին գրում է. "Սայիտը 95-ին միայն մէկ ձիով և մէկ կարպետով Մանտան մտած է, իսկ հիմա հայերէն խլելով՝ ունի 85 կտոր ջրարբին արտ, 50 կտոր ոստին արտ, 15 կտոր արտերու կէսը, 1 ծառնոց հազար ծառերով, 1 մարագ, 33 կտոր տուն, որոնց մէջ իր քիւրտերը ապրեցուցած է… Վերոյիշեալներէն զատ 11 կտոր տուն քանդած է, կը տիրապետէ գիւղացիներու մեծատարած հողերուն, արո-

---

[57] *"Ազատամարտ" (Կ. Պոլիս), 23. VII. 1911:*

[58] *"Սուրհանդակ" (Թիֆլիս), 9. VII. 1911:*

[59] *"Մշակ", 20. VII. 1911:*

[60] *Նույն տեղում:*

տավայրերուն և լերան: Սայիտը ունի միմիայն 16 կտոր թափուով հող այն ալ գրաւած զօռով…”[61]:

Սայիդ բեյը գյուղեր և ճամփորդներ թալանելուց ու կողոպտելուց զատ, սպառնալիքներ էր ուղարկում քուրդ և հայ մեծահարուստներին ու դրամ պահանջում կամ ճամփորդներ գերի վերցնում և փրկանքից հետո միայն ազատ արձակում: Այն աստիճան մեծ էր նրա հանդգնությունը, որ մի անգամ էլ Արճակում անակնկալ հարձակում գործեց կառավարության վրանի վրա՝ վալի Բեքիր Սամիին սպանելու դիտավորությամբ, որի հետևանքով սպանվեց 4 մարդ[62]:

Վալի Բեքիր բեյը դիմեց Դաշնակցության ղեկավարներին ու 30 զինված դաշնակցական ուղարկեց Սայիդի վրա, բայց ապարդյուն. մի քանի ամիս դեգերելուց հետո նրանք ձեռնունայն վերադարձան: Արդյունքը եղավ այն, որ սրվեցին միայն հայ-քրդական հարաբերությունները:

Ժամանակի մամուլը ենթադրում էր, որ Սայիդը թաքնվում էր քուրդ ցեղապետերի մոտ: Սակայն թակուրի աշիրեթապետ Հուսեին բեյը փոխանակ նրան քրդական գյուղերում փնտրելու, այդ պատրվակով հարձակվում է Հնդոտան հայկական գյուղի վրա և կողոպտում 400 ռուբ. արժողությամբ իրեր[63]:

Կառավարությունը կրկին զորք է ուղարկում, սակայն քրդերի հետ ընդհարման հետևանքով 2 ոստիկան է վիրավորվում, իսկ ավազակն էլ փրկվում է ձերբակալությունից[64]:

1911 թ. օգոստոսին տյուտերցի վրանաբնակները հարձակվում են Կարկառի Որեզ գյուղի հոտի վրա, լեռներից քշում 100 ոչխար և սպանում 1 եզ: Հայ գյուղացիները նրանց հասնում են Մոկսի սահմաններին և պահանջում, որ իրենց ոչխարները վերադարձնեն: Քրդերը՝ տեսնելով, որ ոչ մի կերպ չեն կարողանում խուսափել գյուղացիների արդար պահանջներից, իրենց ոչխարներից 84-ը հանձնում են որեզցի հայերին: Իմանալով այդ մասին՝ Մոկսի մյուդիր Մուրթուլլահ բեկը տյուտերցի ցեղապետին հրահանգում է իսկույն բողոքարկել Գավաշի կառավարությանը՝ նշելով, որ “որեզցի հայերը, իրենց գլուխը ունենալով աչքառու քանի մը հայեր՝ զինու զօրութեամբ յարձակեցան մեր վրաններուն վրայ և տարին 100 ոչխար, անոնց երկիւղէն վիժեց կին մը և խենթացան երկու քօչարներ”[65]:

Ի դեպ, Գավաշի կառավարությանն առանձին բողոքում է նաև Մուրթուլլահ բեկը, որի արդյունքում գործ է հարուցվում հայերի դեմ: Ոստիկաններ և բժիշկ են ուղարկվում վրանաբնակների իջևանը քննելու համար “խելագարուած քօչարները և վիժած

---

[61] *“Ազատամարտ”, 13/26. VII. 1909:*

[62] *“Մշակ”, 16. XI. 1910, 15. VI. 1911:*

[63] *“Մշակ”, 16. XI. 1910:*

[64] *“Մշակ”, 15. VI. 1911:*

[65] *“Ազատամարտ”, 16. VIII. 1911:*

կինն ու երեխան”: Սակայն պարզվում է, որ ծննդաբերության ժամանակ երեխան խեղդվել էր, իսկ խելագարության դեպք երբեք չի եղել[66]: Գործը յուրահատուկ էր այն առումով, որ “հայերը իրենց ձեռքով յանդգներ են իրենց իրաւունքը պաշտպանել”[67]: Լցված լինելով վրեժխնդրությամբ՝ Մուրթուլլահ բեկը քաջալերում է իր շրջանի ավազակապետերին հայերից բռնությամբ գանձելու իրենց կապալն ու օլամը, որպեսզի հայերը “չշփանան”: Ի դեպ, առաջին դեպքը չէր, երբ Մուրթուլլահը հանդես էր գալիս հայերի դեմ: Երբ քոչարների Թահար աղան՝ միացած ավազակ Սեյիդ Ալիին, հարձակումներ են գործում Կթանց, Հախավուս, Հայրամուս, Մամռտան հայկական գյուղերի վրա և կապալ պահանջում, Մուրթուլլահ բեկը սպառնում է հայերին բանտարկել ու պատժել, եթե նրանք բողոքեն. “քանի որ, կ'ըսէ այդ պատուհաս միւտիրը, ըսի նախապէս Հայերուն, որ բան մը տան Սէյիտ Ալիին, Հայերը չտուին ու ան թալլեց...”[68]: Բացի այդ, նա վիճելի տարածքի համար իրար դեմ է հանում հարտանցի և շակմերցի քրդերին, որպեսզի հայերին իրենց գոմաներից քշեն[69]:

1911–1912 թթ. շարունակվում էին ավազակապետ Միր-Մեհի չարագործությունները, իսկ կառավարությունը փորձում էր ներողամտություն հանդես բերել վերջին հինգ տարվա ընթացքում 50 սպանություն, անհամար կողոպուտներ ու թալաններ իրագործած քուրդ ավազակների նկատմամբ: 1911 թ. սեպտեմբերին Միր-Մեհն սպանում է իրեն հետապնդող ոստիկան-զինվորներից մեկին, բռնագրավում 15 ոստիկան-զինվորի զենքերը և փախչում[70]:

Միր-Մեհին “հանգստացնելու և ներելու նպատակով” իշխանությունները բանակցում են նրա հետ ու առաջարկում 200 ոչխար, 200 ոսկի, ինչպես նաև նրա հորն ու հորեղբայրներին բանտից անարգել ազատ է արձակում: Այդ նպատակով Միր-Մեհն գալիս է Նորդուզ, մյուդիրից ստանում է 200 ոսկի՝ նրա հետ Վան գնալու խոստում տալիս, բայց գումարը ստանալուց հետո դրժում է խոստումը (միգուցե չհավատալով իրեն տված խոստումին) և գնում Պարսկաստան՝ ճանապարհին հափշտակելով 25 ջորի ու 10 ձի: Իսկ կառավարությունը համակերպվում է իրավիճակի հետ և չի էլ հետապնդում նրան[71]: Մի քանի օրից հետո ավազակը հայտնվում է Շատախում և հարձակվելով Տաքու բնակավայրի վրա՝ սպանում է Քրմենց գյուղի երկու տղամարդու ու երկու կնոջ[72]:

---

[66] *Նույն տեղում:*
[67] *Նույն տեղում:*
[68] *Նույն տեղում:*
[69] *Նույն տեղում:*
[70] *“Սուրհանդակ”, 7. X. 1911:*
[71] *“Մշակ”, 26. VII. 1912:*
[72] *“Մշակ”, 9. VIII. 1912:*

…Քրդական շահատակությունների հետևանքով հայերի վիճակը Վանի նահանգում անտանելի էր դարձել: Ունեցվածքի, պատվի ու կյանքի ապահովվության մասին խոսք անգամ լինել չէր կարող: Ջարդի սպառնալիքները բնակչությանը պահում էին մշտական սարսափի մթնոլորտում: Հայերի կյանքի և պատվի նկատմամբ տեղի ունեցող կամայականություններն անցնում էին ամեն չափ ու սահման:

Կառավարությունն ամենևին չէր էլ պատրաստվում բավարարել վանեցիների արդարացի պահանջները: Նա մի կողմից խոստումներ էր տալիս քրդական հարցը լուծելու համար[73], սակայն մյուս կողմից կույր և խուլ էր ձևանում անթիվ փաստերի, զրկանքների ու ապօրինությունների առաջ, որոնք ամեն օր տեսանելի էին բոլորի աչքի առաջ:

Եվ այս ամենն այն դեպքում, երբ քուրդ հեղինակ Ն. Խ. Մախմուդովը, անտեսելով պատմական իրականությունը, փորձում է "հավաստիացնել", որ եթե նայենք քուրդ ժողովրդի, մասնավորապես 19–20-րդ դարերի անցած պատմական ուղուն, ապա կհամոզվենք, որ "Քրդստանի ամեն մի քար, ամեն մի թուփ քրդերի արյունով է ներկված"[74]:

Վերոշարադրյալը գալիս էր հաստատելու այն, որ օսմանյան սահմանադրական կառավարությունը և պաշտոնյաները ոչ միայն անկարող էին, այլև չէին կամենում անգամ պատժել հայտնի չարագործներին՝ չնայած նրանց պատասխանատվության ենթարկելը դյուրին էր:

Փաստորեն, արևելյան նահանգներում դեռ շարունակվում էին հին կարգերը և քրիստոնյաների նկատմամբ բռնությունները, իսկ սահմանադրությունն էլ անվանական էր, քանի որ կառավարությունը քրդերի պաշտպանն էր:

Այդ առումով հատկանշական է Օսմանյան կայսրության տարածքում բնակվող ժողովուրդների վերաբերյալ Մ. Թալեաթ փաշայի 1910 թ. օգոստոսի 6-ին Սալոնիկում արտասանած ելույթներից մեկը. "Սահմանադրության համաձայն բոլոր թուրքահպատակները՝ ինչպես մահմեդականներն, այնպես էլ քրիստոնյաները, հավասար են օրենքի առաջ: Բայց դուք ինքնստինքյան հասկանում եք, որ դա անիրական է: Այդ գաղափարը նախնառաջ հակասում է շարիաթին: Դրան հակառակվում է մեր անցյալը: Դրա դեմ բողոքում են հարյուր հազարավոր հավատացյալների զգացմունքները: Հետո, շատ կարևոր է, որ դրան դեմ են հենց քրիստոնյաները, քանի որ նրանք չեն ուզում դառնալ օսմաններ: Թուրքիայում օրենքի առջև հավասարության մասին խոսք կարող է լինել միայն այն ժամանակ, երբ կավարտվի բնակչության բոլոր տարրերի օսմանիզացումը"[75]:

---

[73] Roderic H. Davison. *Նշվ. աշխ., էջ 4:*

[74] *Ն. Խ. Մ ա խ մ ո ւ դ ո վ. Քուրդ ժողովուրդը, համառոտ պատմական ակնարկ, Երևան, 1955, էջ 141:*

[75] А. К. Д ж и в е л е г о в. Армения и Турция. М., 1946, с.10.

Վանի նահանգում 1908–1912 թթ. հայ-քրդական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունից պարզ է դառնում, թե Օսմանյան կայսրությունում բարեկարգումների խնդիրն ինչու էր հրատապ դարձել՝ անկախ թուրքական այն մեղադրանքներից, որ հայերը "դավաճանել" են օսմանյան հայրենիքի "արժանապատվությունը", հանդես են բերում անջատողական ձգտումներ և իրենց հույսը կապել են եվրոպական դիվանագիտության հետ:

Ինչևէ. շարունակաբար տեղի ունեցող քրդերի թալանների, սպանությունների և կողոպուտների միակ թելադրողն ու պատասխանատուն իթթիհատ կուսակցությունն էր, որ չորսամյա տիրապետությունից հետո 1912 թ. "ինկաւ թաւալգլոր": Սակայն Գ. Զոհրապը ստիպված էր խոստովանել, որ եթե իթթիհատը թուլանար, արևելյան հայկական նահանգներում կացությունն անհանդուրժելի պետք է դառնար[76]:

ПРОИЗВОЛ КУРДОВ В ВАНСКОЙ ОБЛАСТИ И ПОЗИЦИЯ ИТТИХАДСКОГО ПРАВИТЕЛЬСТВА
(1908–1912 гг.)

АВЕТИС АРУТЮНЯН

Резюме

Переворот младотурок в 1908 г., восстановление конституции и предпринятые правительством «антикурдские» мероприятия пробудили в среде армян Османской империи большие надежды. Но после переворота, вследствие курдских набегов, положение армян в Ванской области стало невыносимым. Произвол в отношении собственности, достоинства и жизни армян переходил все границы. Угроза погромов держала население в обстановке постоянного страха. Однако иттихадское правительство оставалось безучастным к справедливым требованиям армянского населения Вана. С одной стороны, оно обещало решить курдский вопрос, с другой – оставалось «слепым и глухим» в отношении бесчисленных фактов беззакония, ежедневно происходивших на глазах у всех. Более того, правительство игнорировало требования и протесты армянского патриарха в Константинополе, считая их преувеличенными. Из создавшегося положения явствовало, что конституционное правительство и должностные лица не только не были в состоянии, но вовсе и не желали наказывать преступников, несмотря на то, что привлечь их к ответственности не составляло труда. Исследование истории армяно-курдских отношений в Ванской области в 1908–1912 гг. проливает свет на вопрос, почему проблема армянских реформ 1912–1914 гг. для правительства младотурок стала безотлагательной.

---

[76] *Ա. Ա. Ալպօյաճեան. Անհետացող դէմքեր, Գրիգոր Զօհրապ (իր կեանքը եւ իր գործը), Կ.Պոլիս, 1919, էջ 208:*

KURDISH OUTRAGES IN THE PROVINCE OF VAN AND THE APPROACH OF ITTIHAT GOVERNMENT (1908-1912)

AVETIS HARUTYUNYAN

S u m m a r y

The Coup of the Young Turks in 1908, the restoration of the Constitution and the “anti-Kurdish” measures of the government arouse great hopes among the Armenians of the Ottoman Empire. But after the Coup and in the result of the Kurdish raids, the conditions of Armenians became unbearable in the province of Van. The outrages regarding the safety of property, honor and life of Armenians were beyond all borders. The threat of being massacred kept the population in the atmosphere of permanent horror. However, the government remained indifferent towards the true demands of the population of Van. On the one hand it gave promises to solve the Kurdish problem, on the other hand it pretended deaf and dumb to numerous facts of outrages happening daily in front of everyone. The government ignored the demands and complaints of the Armenian Patriarchate of Constantinople considering them as exaggerated. Moreover, the Ottoman constitutional government and its officials were not only unable but were unwilling to punish the criminals either, though it would not be hard to prosecute them.

The study of the history of the Armenian-Kurdishrelationshipintheprovince of Van in 1908-1912, sheds light on the issue why the problem of the Armenian reforms of 1912-1914 were so urgent for the Young Turks’ government.